Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 01

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<19>> հունվարի 2022թ. ք. Երևան

2022 թվականի հունվարի 19-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Սիմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար
Ս. Բաղինյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի խորհրդական, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա.

Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված 3 հայտերի քննարկում:
2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:
3. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏՁ00044 լիցենզիա ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված դիմումի մասին

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում

1.Քննարկվեց՝

«ՏԵԽԶՆՆՈՒՄ-1» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021 թվականի դեկտեմբերի 30-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի դեկտեմբերի 30-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից հետո, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ 2022 թվականի հունվարի 7-ին հայտատուի կողմից ներկայացված տարածքում ուսումնասիրվել է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ տեխզննություն իրականացնելու համար նախատեսված տարածքում առկա չէր ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի ի N 1565-Ն որոշման հավելվածի ձև N 2-ով հաստատված արատորոշման միջոցներից ղեկային վարման շարժաբերի և կախոցի վիճակի ստուգման համար նախատեսված սարքավորումը: 2022 թվականի հունվարի 12-ի թիվ 1462-2022 գրությամբ կազմակերպությունը լրացուցիչ ներկայացրել է ղեկային վարման շարժաբերի և կախոցի վիճակի ստուգման վերաբերյալ չափագիտության ազգային մարմնի կողմից տրամադրված N 062213 ստուգաչափման վկայականը, որը հավաստում է, որ նշված գործողությունը իրականացվում է կազմակերպությանը պատկանող BEM MULLER տեսակի կայանքի հոլովակավոր ստենդի կողմից: Չափագիտության ազգային մարմին կողմից տրամադրված N 062213 ստուգաչափման վկայականը հանձնաժողովի անդամների կողմից ընդունվեց ի գիտություն:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՏԵԽԶՆՆՈՒՄ-1» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2.Քննարկվեց՝

«ՆԱՐ-ԱՐՄ» ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021 թվականի դեկտեմբերի 15-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին և 2022 թվականի հունվարի 3-ին ի լրումն ներկայացված գրությունը:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի դեկտեմբերի 15-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 21.12.2021թ. թիվ ԱՍ/25.1/33074-2021 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա.բացակայում է ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի թիվ 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված հայտը՝ համաձայն N 1 ձևի,

բ.բացակայում է «Նար-Արմ» ՍՊ ընկերությանը տրամադրված՝ Մասիս համայնքի Երևանյան փ., 43/21 հասցեում տեղակայված տեխնիկական զննության անցկացման համար նախատեսված տարածքի հատակագիծը, ինչը հնարավորություն չի ընձեռում փաստաթղթային եղանակով ուսումնասիրելու արտադրական տարածքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 11-ի N 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգով սահմանված պահանջներին,

գ.կայանքի հոլովակավոր ստենդի ստուգաչափման N 059956 վկայականում 414847-001 գործարանային համարով սարքավորման տեսակը նշված է MAHA BIS-18, իսկ ներկայացված տեխնիկական անձնագրում սարքավորման տեսակը նշված է IW 7 EOROSYSTEM: Նույն սարքավորման համար տրամադրված N 10/01 եզրակացության մեջ սարքավորման տեսակը նշված է MAHA BIS-13, իսկ տրանսպորտային միջոցի զանգվածը նշող /18 տոննա/ գրառումը ճշգրտման կարիք ունի,

դ.առկա չէ դողերի ստուգաչափված ճնշաչափերի վերաբերյալ տեղեկատվություն,

ե.բացակայում է գազի արտահոսքի որոշման սարքի տեխնիկական պարամետրերը պարունակող տեխնիկական անձնագիրը,

գ.տրանսպորտային միջոցի ղեկային վարման շարժաբերի և կախոցքի վիճակի ստուգման սարքվորումը ստուգաչափված է որպես մետաղի անհամասեռության որոշման սարք,

է.բացակայում է կոմպրեսորի և ստուգաչափված մանոմետրի վերաբերյալ տեղեկատվությունը,

ը. բացակայում է ինֆրակարմիր դետեկտորով թվային տեսախցիկի առկայության վերաբերյալ տեղեկատվությունը:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպության կողմից 23.12.2021թ. թիվ 64368-2021 և 03.01.2022 թվականի թիվ 148-2022 գրություններով վերացրել է վերը նշված թերությունները կամ ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը:

Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հայտատուի կողմից ներկայացված տարածքում ուսումնասիրվել է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՆԱՐ-ԱՐՄ» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

3.Քննարկվեց՝

Անհատ ձեռնարկատեր Նելլի Օվչյանի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2022 թվականի հունվարի 7-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և

ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին և 2022 թվականի հունվարի 11-ին ի լրումն ներկայացված գրությունը:

Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի հունվարի 7-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին հայտ և հայտին կից փաստաթղթեր: Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, թիվ ԱՍ/25.1/440-2022 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝

ա. բացակայում է ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի թիվ 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգի 2-րդ ենթակետով սահմանված՝ Ա/Զ Նելլի Օվչյանին տրամադրված տեխնիկական զննության համար նախատեսված արտադրական տարածքների սեփականության կամ օգտագործման իրավունքի վկայականի պատճենը,

բ. բացակայում է թվային տեսախցիկի տեխնիկական անձնագիրը, միաժամանակ խնդրել ենք լուսանկարի միջոցով ցուցադրել տեսախցիկի տեղադիրքը,

գ.բացակայում են դողերի ճնշաչափերի հավաքածուի լուսանկարները՝ ստուգաչափումը հավաստող հոլոգրաֆիկ ստուգաչափման դրոշմի արտատիպի պատկերով:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Կազմակերպության կողմից 11.01.2022թ. թիվ 1285-2022 գրությամբ վերացրել է վերը նշված թերությունները:

Միաժամանակ 13.01.2022թ. ԱՍ/25.1/573-2022 գրությամբ Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին լիազորվել է տարածքային ստորաբաժանման ուժերով ուսումնասիրել Կազմակերպության կողմից հայտին կից փաստաթղթերում ներկայացրած տեղեկատվության համապատասխանությունը: Պատասխան գրությամբ տեսչական մարմինը հաստատել է Սյունիքի մարզի Կապան քաղաքի Գործարանային փ., 16/2/2/2/2 հասցեում գտնվող բազայի և առկա արատորոշման միջոցների համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված չափորոշիչներին:

Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ հայտատուի կողմից ներկայացված տարածքում ուսումնասիրվել է ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը
Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

ԱԶ ՆԵԼԼԻ ՕՎՉՅԱՆ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝
հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:
Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

4.Քննարկվեց՝
<<ՖՈՐՄԱՏ-ԱՎՏՈՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ-ի /այսուհետև՝ Կազմակերպություն/ 2021 թվականի դեկտեմբերի 14-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00010 լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:
Ա. Ստեփանյանը պարզաբանեց, որ Կազմակերպությունը 2021 թվականի դեկտեմբերի 14-ին լիազոր մարմին է ներկայացրել տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՄՏԶ 00010 լիցենզիայի ներդիր տրամադրելու մասին:
Ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունից և թերությունները հայտնաբերելուց հետո, 16.12.2021թ. թիվ ԱՍ/25.1/32586-2021 գրությամբ հայտատուին ծանուցվել է հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունների մասին, մասնավորապես՝
ա/.ներկայացված դիմումում բացակայում է հայցվող հոսքագծի տեսակի վերաբերյալ նշումը,
բ.բացակայում է ք. Երևան, Մալաթիա-Սեբաստիա համայնք, <<Եռաբլուր>> կոչվող բլուրներին կից հողամասում գտնվող տեխնիկական զննության անցկացման համար նախատեսված տարածքի հատակագիծը՝ տարածքի չափերով, գործող հոսքագծի սարքավորումների դասավորությամբ, ինչը հնարավորություն չի ընձեռում փաստաթղթային եղանակով ուսումնասիրելու արտադրական տարածքի համապատասխանությունը ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 11-ի N 690-Ն որոշման Հավելված 1-ով հաստատված կարգով սահմանված պահանջներին,
գ/. հայտին կից փաստաթղթերում ներկայացված չափագիտական վկայագրման դրական արդյունքները վավերացնող՝ չափագիտության լիազոր մարմնի կողմից տրամադրված ստուգաչափման վկայականները թերի են և չեն պարունակում ՀՀ կառավարության 2021թ. սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշմամբ հաստատված կարգի ցանկ N 2-ով սահմանված տեխնիկական արատորոշման բոլոր միջոցներով տեխնիկական զննության կայանի հագեցվածության վերաբերյալ տեղեկատվություն:

Միաժամանակ հայտատուին «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն առաջարկվել է նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում լիազոր մարմին ներկայացնել պահանջվող փաստաթղթերը և նախազգուշացվել, որ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ եթե պատշաճ ձևով նախազգուշացնելը լիցենզավորող մարմնի կողմից ուղարկվելու օրվան հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտատուն չի վերացնում հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր, ներկայացված հայտը ենթակա է մերժման:

Հայտատուն գրությունը ստանալուց հետո 29.12.2021թ. նաև կապ է հաստատել Լիցենզավորման բաժնի հետ, ստացել լրացուցիչ պարզաբանումներ, սակայն օրենքով սահմանված ժամկետում չի վերացրել հայտում կամ կից փաստաթղթերում առկա ոչ էական թերությունները կամ չի ներկայացնում անհրաժեշտ փաստաթղթեր կամ նյութեր:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

<<ՖՈՐՄԱՏ-ԱՎՏՈՄՈՆՏԱԺ>> ՍՊԸ	0 կողմ, 7 դեմ

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի պահանջներին՝ հայտը ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՏՋ 00044 լիցենզիան և ներդիրն ուժը կորցրած ճանաչելու համար ներկայացված հայտի քննարկում:

Քննարկվեց՝

«ՔԱՌ ՍԵՐՎԻՍ ՍԻԹԻ» ՍՊ ընկերության 2022 թվականի հունվարի 11-ի դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՏՋ 00044 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Ա. Ստեփանյանը՝

ներկայացրեց «ՔԱՌ ՍԵՐՎԻՍ ՍԻԹԻ» ՍՊ ընկերության 2022 թվականի հունվարի 11-ի դիմումը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության N ՏՏՋ 00044 լիցենզիան և լիցենզիայի N 00001 ներդիրն ուժը կորցրած ճանաչելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամներն ուսումնասիրեցին դիմումը և դիմումին կից ներկայացված փաստաթղթերը՝ լիցենզիայի և ներդիրի բնօրինակները :

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները, տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ՔԱՌ ՍԵՐՎԻՍ ՍԻԹԻ» ՍՊԸ	7 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝ ըստ «Լիցենզավորման մասին» օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա. Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա. Ստեփանյան